37-ՐԴ ՆԻՍՏ

16 Նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Դ. Զուբյան.* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահ, արտաքին գործոց, ներքին գործոց, իրավարարության և զինվորական մինիստրը:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Հարցումներ և հարցապնդումներ.
2. Մեծամասնականներին մի տեղ տալու խնդիրը.
3. Օրինագիծ Պարսկաստանում գտնվող գաղթականներին օգնելու մասին- Ա ընթերցում.
4. Օրինագիծ երկաթուղային կայարանի ծառայողների կոոպերատիվ խանութ բանալու մասին- Ա ընթերցում.
5. Օրինագիծ քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի մասին - Ա ընթերցում.
6. Զինվորական ծառայության մեջ գտնված նախկին քաղաքացիական ծառայողների դիմումը նպաստն իրենց վրա ևս տարածելու.
7. Օրինագիծ զին. մինիստրության 5 միլ. վարկ բանալու մասին.
8. Ընթացիկ գործեր:

Մ.Հարությունյան - Առաջարկում է օրակարգի գ. դ. ե. զ. և է կետերը քննել առաջին հերթին, քանի որ կարևոր խնդիրներ են, սակայն ամեն անգամ դրվում են օրակարգի վերջին մասում և չեն քննվում:

Քվեարկվում է և ընդունվում է առաջարկը:

Ն. Աղբալյան - Զեկուցում է գ. կետի մասին. Ներսես եպիսկոպոսը* դիմել է կառավարության և խնդրել աջակցություն Պարսկաստանի հայերի համար: Մեր կառավարությունը առաջարկում է տալ 300 000ռ.:

Ս. Մամիկոնյան - Ո՞վ է ծախսելու:

Մինիստր-նախագահ - Թեմական առաջնորդն ու Թավրիզի ազգային խորհուրդը:

Եր. Հարությունյան - Որքա՞ն է գաղթականության թիվը:

Ն. Աղբալյան - Թղթերում ոչինչ չկա այդ մասին:

Մինիստր-նախագահ - Ճիշտ թիվը գաղթականության հայտնի չէ, միայն կառավարությունը այն գիտե, որ մեծ թվով գաղթականներ Տաճկաստանից անցել են դեպի Պարսկաստան: Մեր առաջարկած 300 000-ը նախկին ազգային խորհրդի հատկացրած, բայց դեռ չուղարկած 200 000-ի հետ գուցե և հնարավորություն կտա որոշ օգնություն հասցնել:

Հ. Ազատյան - Մեզ հասած տեղեկության հիման վրա Թավրիզի շրջակայքում 15-20 հազար գաղթականություն կա, այնպես որ առաջարկված գումարը առանց վիճաբանության կարելի է ընդունել:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Առաջարկում է ընդունել շտապողաբար, որ և անցնում է:

Կարդացվում է օրինագիծը և ընդունվում խորհրդարանի կողմից:

Որոշվում է հատկացված գումարը ուղարկել ըստ պատկանելույն՝ արտաքին գործերի մինիստրի միջոցով:

---

* Խոսքը Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյանի մասին է:-Ծանոթ. կազմ.:

Կարդացվում է և չնչին փոփոխությամբ ընդունվում է երկաթուղային կայարանի ծառայողների համար կոոպերատիվ խանութ բանալու մասին օրինագիծը:

Քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի մասին եղած օրինագծի քննությունը հետաձգվում է, մինչև որ կքննվի ծառայողների ցուցակը:

Մինիստր-նախագահ - Հայտարարում է, որ Թիֆլիսում եղած մեր մինիստրը և պետական հսկիչը հեռագրել են, որ այնտեղ ծախվում է մի ռադիո շատ ուժեղ տեսակի և թույլատրություն է խնդրում գնելու այդ արժեքավոր մեքենան:

Խորհրդարանը միաձայն հանձնարարում է կառավարության գնել ռադիո՝ բաց անելով 2000 ռ. վարկ այդ նպատակով:

Ձեկուցվում է զինվորական ծառայողության մեջ գտնված նախկին քաղաքացիական ծառայողների դիմումը՝ նպաստն իրենց վրա ևս տարածելու մասին եղած խնդիրը:

Քվեարկվում է հանձնաժողովի բացասական որոշումն այդ մասին, որ անցնում է միաձայն:

Քսան րոպե ընդմիջումից հետո վերսկսվում է նիստը Գ. Տեր-Խաչատրյանի նախագահությամբ:

Ա. Մալխասյան - Ձեկուցում է զինվորական մինիստրությանը 5 միլիոն վարկ բանալու մասին օրինագիծը: Քվեարկվում և ընդունվում է զինվորական հանձնաժողովի որոշումը՝ տալ մինիստրության հիշյալ գումարը:

Քննվում է Արշ. Մելիքյանի առաջարկը՝ մեծամասնականներին խորհրդարանում մի տեղ տալու վերաբերմամբ:

Մեծ վիճաբանություն է տեղի ունենում, որին մասնակցում են՝ *Արշ. Մելիքյան, Հ. Բուդաղյան, Ա. Խոնդկարյան, Ս. Մամիկոնյան, Եր. Հարությունյան, Ս. Վրացյան, Ղարաջյան, Ստեփանյան, Ս. Թորոսյան:*

Վեճը ընդհատվում է. առաջարկվում են բանաձևեր, որոնցից անցնում է 22 ձայնով դաշնակցական ֆրակցիայինը, որն այն իմաստն ունի, թե՝ բոլշևիկները տեղ պիտի ունենան խորհրդարանում սոց.-դեմ. ֆրակցիայի 6 անդամների մեջ:

Հարցումներն ու հարցապնդումները թողնվում են հաջորդ նիստին:

Կարդացվում է խորհրդարանի 10 անդամների ստորագրությունը կրող դիմումը Ախալքալաքի գաղթականության վերաբերյալ, լինում է մտքերի կարճատև փոխանակություն այդ խնդրի շուրջը:

Մ. Հարությունյան - Առաջարկում է խնդիրը հանձնել համապատասխան հանձնաժողովի, որ նա մի մշակած բանաձև հանի և հաջորդ նիստին բերի խորհրդարան:

Ընդունվում է առաջարկը:

Նիստը փակվեց գիշերվա ժամը 11-ին:

«Ձանգ», 13 դեկտեմբերի 1918թ.